



27. ԵՐԿԻՆՔ ԳՆԱՑՈՂ ՏՂԵՆ

ժամանակով ըլել ա մի թագավոր, նրան որդի չի ըլել, մի գևրիչ ման գալիս ա ըլել, թագավորի կնիկը կտտով, խանով փայ տալիս ա ըլել:

Դավրիշն ասել ա.— Ծս շատ տեղեր եմ ման գալի, բռնով, շերբիով են տվել, քս ո՞նց ա, որ դու կտտով, խանով ես տալի:

Թագավորի կնիկն ասում ա.— Ինձ էվլաթ չի ըլում, ըսենց տալիս եմ, որ մնի խոսքը առ աստված հասնի, ընձ էլ բեխա ըլի:

Դավրիշն ասում ա.— Դուք աստծու ճամփուցը ընկած եք, նահալիս կրգան տուտսաղ եք անում, կախաղան եք տալի, նահալիս խեղդում եք: Ձեր տուտսաղները վեր թողեք, աստու ճանապարհին վացեք, մատաղ արեք, մոմ վառեք, թե քեզ երեխա չի ըլի՝ իմ վիպր կտրեցեք:

Թագավորը լսում ա, իրեն տուտսաղները վեր թողում, մատաղ անում, մոմ վառում: Սրան տարուն վրա մի տղա ա ըլում:

Էն տղեն, ով որ տարով ա մեծանում, նա՛ օրով, գալիս ա հասակը առնում, լավ բանի գործի հասնում:

Որ գործի հասնում ա, թագավորը ասում ա.— Փող տանք մեր տղին, զրգենք բազար, տենանք հըլա դըրա տուն ա, թե գըրա դուս ա:

Հազար մանեթ են տալի, հարուր կապեկ տուն չի բերում, պարապ ա տուն գալի:

Թագավորը ասում ա կնկանը.— Խաղնեքս բաթմիշ արավ, թե
անքար եմ տալի, գլուխ չի ունըմ, թե տանկիցը դուս եմ գձում, հե-
ռացնըմ ինձանե, էլ չէ գլուխ ունըմ:

Կնիկն ասում ա.— Տար մի տեղ տուր, բալքի ուրիշի հացն ու-
տի, տան դադրը իմանա:

Սրանք մտածում են. թագավորը ոանչպարի շոր ա մտնում,
վեր ա ունըմ տղին, որ տանի ուրիշ տեղ, գա:

Գնում են մի ծմակի մեշ, տղեն ասում ա.— Ծարավ եմ, ջրի
տեղ գիտես ո՞չ:

Ասում ա.— Հրեն ճամփի տակին, ձորի մեջ ջուր կա, գնա խմե:

Տղեն որ գնում ա ջրի կուշտը, էլ հերը էրևում չի, հերը խուր-
ջինը ճամփումը վեր ա քցում, ինքը եղ դառնում դըբա իրա տունը:

Տղեն ջուրը խմում ա, դուս գալի, տենում ա, որ օշով չկա:

Տղեն միտք ա անում, միտք ա անըմ, ասում ա. «էլեղ ես կա-
րալ չեմ դնալ իմ հոր կուշտը: Ես էս ճամփեն կրոնեմ ու կերթամ,
յա հարամու ուխտ կընկնեմ, յա մի շենլըկի վրա դուս կըլնեմ»:

Ասում ա, ճամփա ընկնում գնում: Գնում ա, որ ծմակը դուս ա
ըլնում, մի դուզ ա ընկնում առաջը, բռնում ա գնում: Գնում ա
տենում դուզի էն ծերին մի դրալթու ա էրևում, գնում ա տենում ա,
որ մի ծառ դուս էկած, մի տուտը երկնքումը, մինը՝ գետնումը,
տակին մի լավ ախպուր, սա էդ ախպրի վրեն նստում ա, հաց ու-
տում: Քունը տանում ա՝ քնում. թե շատ ա քնում, թե քիչ ա քնում,
տենում ա, որ մի դոշուն ա գալի դըբա էդ աղբուրը: Ղոշունը գա-
լիս ա հասնում էդ աղբրանը:

Նազիրը ասում ա էդ տղին, թե.— Ի՞նչ մարդ ես:

Ասում ա թե.— Ծամփորդ եմ, գնում եմ:

— Դե՛, — ասում ա, — գնա էն կողմը նստի, էս թագավորի
աղբուրն ա, տարենը մի հետ կըգա սրա վրա քեֆ կանե, մին էրկու-
օր կմնա, կերթա:

Գալիս են հաց են ուտում, քեֆ անըմ, թագավորը ասում ա նա-
զրին.— Ղոշունը հավաքե քու կուշտը:

Նազրը բերում հըվաքում ա, թագավորը ասում ա.— Ո՞վ կարա
էս ծառին վեր ըլիլ, գնալ երկինք, փնձ հմա մի խաբար բերե:

էս ղոշունից մինն էլ ա կարում չի վեր ըլնի:

Թագավորը նազրին հարցնում ա.— էլ ունի՞ս մարդ:

Նազրն ասում ա.— Քո ղոշունիցը էլ օքմին չկա, էկա տեհա,
որ քու աղբրի կշտին մի տղա ա նստած, էն տղեն ա մնացել: Տա-
լի եմ շոկ նստացրել:

Թագավորը ջգրվում աս.— Խի՞ չըբերիր նրան էլ հաց ուտաց-
նեիր, թագավորի հացը կպակասե՞ր:

Կանչեց էն տղին, ասեց թե.— Կարա՞ս էս ծառովը գնաս
երկինքը, ինձ հմար մի խաբար բերես:

Տղեն ասաց, թե.— Թագավորն ապրած կենա, թե որ հրաման
կըտաս, կերթամ, ինչ պտեմ անի:

էս տղեն էս ծառին վեր էլավ, ոնց որ ղուշը գնա, էնենց գը-
նում աս:

Թագավորը եզնուց ասաց.— Կանգնի, քեզ բան եմ ասում:
Թագավորաց խոսք աս, չի ասվիլ, որ գնաս խաբար բերես՝ աղջիկս
ուզես՝ կտամ, քու քաշը խաղնա ուզես՝ կտամ, գեղ ուզես, շենլիկ
ուզես՝ կտամ, թաքի ինձ հմար էն տեղան խաբար բերես:

Տղեն էլավ երկինք, տեհավ Ուռնեի կալը, ասաց.— Հինգ ցո-
րեն աս, հըլա մին դարմանը չէ:

Տեհավ, որ ըսենց մի գուռը կա, բաց արավ, տեհավ մի պա-
ռավ կնիկ, մի հարսը, մեկ էլ մի աղջիկ:

Պառավն ասավ թե.— Ա՛յ տղա,— ասավ,— օձն ուր պորտով,
ղուշն ուր թևով ըստեղ կարալ շէր գալ, գու ո՞նց ես էկել:

— Ի՞նչ անեմ,— ասավ,— դեգի ջա՛ն, դե թագավորի հրա-
ման աս, ի՞նչ անեմ:

— Հա՛,— ասըմ աս,— ճամփա ես էկել, սոված կլիս, հաց
դրե՛ք, հաց ուտե:

Հարսը աղաքին հաց աս դնում, տղեն նստում ուտում աս:

Հացից եղնա պառավն ասըմ աս.— Ինչի՞ ա թագավորը ղրկել
քեզ:

Ասավ.— Թագավորը ղրկել աս, թե ձեր դուրթինը ասեք, ինչ
գործի եք:

Պառավն ասեց.— Գանք ունչպարին, որ եզնիքը կլծե իրան
չութը, կերթա ֆողերը կվարե, հենչկեկ ֆողերը պրծնելը տուն չի
գալ: Ծփոր պրծավ, էն ֆողի ծերին կնստի, իրան շորերը թավ
կտա, որ մի հատիկ էլա բան տուն չգա. կգա քառասուն օր քառա-
սունք կպհե, եղնա կլեղանա, կթամզվի, կխստակվի, եղնա կգա
իրան նշանածի կուշտը: Տենում ե՞ս, էն Ուռնեի կալումը ցորենը
կալած աս, հինգ ցորեն աս, մեկ դարմանը չէ: Հարսս էլ իրան տունը
կավլե, շունքի շաբթամուտի, ուրբաթմուտի, կիրակըշտեքի իրիկունը
հենչկեկ ժամի տալը, թե աղբը դուս արավ՝ լավ կըլի, թե ժամից
եղացավ՝ տան բարաքաթն էլ հետը կերթա: Մնաց աղջիկը՝ աղջիկն
էլ էն աս մեր դաքին ղուլուղ աս անըմ, ջուր աս բերում: Ըս էլ էս տան

քոթուկն եմ, կմլամ, կմլամ, կգան ինձանն կրակ կտանեն, կվա-
ռեն:

Տղին դրին ճամփու. ախշիկը եղնուց ուսիցը եղ քաշեց և ազուն
ասեց.— «Թագավորաց խոսք ա, աղջիկս ուզես,— ասաց,— կտամ.
քաշովդ խազինա ուզես՝ տալ պտիմ, շենլիկ ուզես՝ տալ պտիմ»,
համա մի բան էլ ա ուզես ոչ, ասա՝ մի լուծ եզ ունես, մեկ էլ քու
հորական գեղատեղը ինձ տաս:

Տղեն էկավ թագավորի մոտ, պատմեց ընտեղան բաները:

Թագավորը ասաց.— Թե ուզես՝ տալիս եմ, աղջիկս ես ու-
զում, խազինես ես ուզում՝ տալիս եմ:

Ասեց.— Մի լուծ սև եզն ունես, էն եմ ուզում, մին էլ քու հոր
խարապեն:

Թագավորն ասավ.— Իրան տվեք, իրան տվեք՝ քաշվի գնա,
բեդովլաթ ա, ես գիտեի, թե մի լավ տղա ա, կարգին բան ա ուզե-
լու:

Գնացին մի լուծ եզ, մին էլ մին խարաբա տվին էդ տղին:

Տղեն շութը լծեց, դես-դեն վար արավ, վա՛ր արավ, բեզարեց,
վեր թողեց՝ եզնիքը, գլուխը վեր եղիր մի քարի վրա՝ քնեց: Թե
շատ ա քնել, թե քիչ ա քնել, մեկ էլ տեսավ, որ էն երկնքումը տե-
հած աղջիկը էկել ա կուշտը:

— Վիկաց, ա՛յ մարդ,— ասավ աղջիկը,— Ի՞նչ ա պակաս,
որ ըդդա քնել ես:

— էս մի լուծ եզն եմ ուզե՛ առել եմ, էս մե խարապեն եմ
ուզե՛ տվել են, Ի՞նչ կա ըստի, ամեն բան էլ պակաս ա:

Աղջիկն ասում ա.— Մի բանի հմա էլ դարդ մի անի, ամեն
բան էլ կթամսամի, գնա ֆայլա բունի, բի:

Տղեն գնում ա էրկու հարուր ֆայլա ա բունում, էրկու օրի մեջ
մի լավ ամարաթ ա կանգնեցնում:

Աղջիկը բերում ա պատի մեջը մի ռանձին իրան հմա օթախ
շինում, դուռն էլ քարի դուռն անում, որ եղ ա անում, բրավուրդ
չի ըլում, պատ ա, թե՛ դուռ:

Մի վախտ ընդհան թագավորը դուս ա գալի իրան կտերը
բոլթա տալի:

— Նազի՛ր,— ասում ա,— մի դուրբինը դուս բե, իմ հոր
խարաբումը մի ըսպիտակ բան ա ըլում, տենանք էն Ի՞նչ ա:

Նազիրը մտիկ ա տալի, ասում ա.— Թագավո՛ր, էն հանգի
մի ամարաթ ա, որ քու պապերն էլ շեն տեսե:

Թագավորը մտիկ ա տալի, տենում ա մի լավ ամարաթ կանգ-

նած, վեր ա կենում ղոշունով գալիս ա ըստիան էն կտուրը վեր գալի, մտիկ ա անում:

Իրան նազիրին ասում ա.— Գնա ընդիան մի կրակ ըի, ըստի կերակուր էփենք, տան տիրոջն էլ կանչի գա, իրար հետ հաց ուտենք:

Նազիրը գալիս ա գուռը թրըխթրըխկացնում, աղջիկը դուռը բաց ա անում: Նազիրը որ աղջկան տեսնում ա՝ ուշքը գնում ա:

— Հա՛,— ասում ա աղջիկը,— ինչի՞ հս էկել:

Ասում ա.— էկել եմ կրակ տանեմ, համ էլ քու տան տիրոջը թագավորը կանչում ա:

Ասում ա.— Մի սըհաթից կգա, կզարկեմ կգա, դու կրակ առ, գնա՛:

Նազիրը կրակը առնում ա, գնում թագավորի մոտ:

Թագավորը նայում է երեսին, ասում.— Նազիր, էգ ի՞նչ հալումն հս:

Ասում ա.— Թագավորն ապրած կենա, էնդի մի աղջիկ կա, որ ո՛չ գիտենք երկնքիցն ա վեր էկել, ո՛չ գիտենք ֆողեզեն ա, ո՛չ գիտենք հրեղեն ա, քու ազգն ու տակդ էդ թավուր աղջիկ տեհած չի լի:

Մի վախտ անցնում ա, էն տղեն գալիս ա կուշտները, հաց են ուտում, քեֆ անում: Գնալու վախտը թագավորն ասում ա.— էս կիրակի մենք քեզ մեծըցինք, մեկել կիրակի էլ դու պտիս մեզ մեծըի:

Տղեն ասում ա.— Աչքի՛ս վրա, կիրակի օրը մեր ղոնախն եք:

Տղեն գնում ա տուն, աղջիկն ասում ա.— Թագավորն ի՞նչ ասավ:

— Թագավորն ասավ, թե՛ էս կիրակի հս եմ քեզ ղոնախ արել, էն կիրակի էլ դու հս ինձ ղոնախ անելու:

Աղջիկն ասում ա.— Վախիլ մի՛, իմ ձեռի միջին գրած ա՛ ի՛նչ որ ըլելու ա, մենակ իմ մեռնելու օրը չգիտեմ:

Մեկ էլ էկող կիրակի օրը աղջիկը ամեն կերակուր պատրաստում ա, բերում սուփրի վրա շարում, իրան հմա կերակուր վերցնում, մտնում իրա օթախը, մարդուն ասում.— Դուռը փակիր, գնա բազար, մի պառավ բեր, պղնձի կողքին նստացրու, որ կհարցնեն, թե ով ա՞, ասա՛ լիմ տան տերն ա՞:

Տղան գնում ա բազար, տեսնում ա մի պառավ, առնում ա գալիս:

Թագավորը որ գալիս ա, տեսնում ա որ կերակուրի հոտը շատ

լավ ա գալի, ասում ա.— Կերակուրի հո՛տը ըսենց ա, ինքը ինչ-պե՛ս կըլի:

Նի ա մտնում, տենում ա պղնձի կողքին մի պառավ նստած, ծնկները ցից արած, պռոշը քաշ արած:

Ասում ա.— Ա՛յ տղա, քու տան տերը ո՞վ ա:

Ասում ա.— Իմ տան տերը էս պառավն ա:

Թագավորը ուտում-խմում ա, գնում ա տուն, նազիրին կանչում, ձիու պոչով տալի սըպանում, թե՛ ինձ խի՞ խափեցիր, էն տան տերը մի պառավ ա, ոչ թե հյուրի-մալաք:

Մի քանի օր եղնա մի ուրիշ նազիր ղրկում ա, թե.— Գնա էն տղին կանչե, տեղ եմ ղրկելու:

էս նազիրը գալիս ա դուռը թըխկթըխկացնում, աղջիկը դուռը բաց ա անըմ, նազիրը տենում ա աղջկան, ուսմը գնում ա, ուշագրնաց ըլում:

— Մարգդ տ՛ւր ա,— ասըմ ա,— թագավորը կանչում ա:

— Գնա՛, — ասըմ ա,— ըրկունս կգա՝ ոավոտը կզարկեմ:

Մարգը ըրկունը գալիս ա, ասում ա.— Թագավորը քեզ ուզում ա, գնալ պտիս:

Ռավոզը գնում ա էս մարդը թագավորի մոտ:

— Ա՛յ տղա,— ասում ա,— տատս մահացել ա, ոսկի ղուլթու բլանիքը հետը տարել ա, քեզ զարկում եմ էն դունիեն, որ տատի կշտիցը բլանիքը բերես:

Տղան ասում ա.— Գնամ տուն դիպչեմ, գամ գնամ:

Ասում ա.— Գնա՛:

Տղեն գալիս ա տուն, աղջիկն ասում ա.— Թագավորն ի՞նչ ասեց:

էն էլ ասում ա.— Տատս վախճանվել ա, ոսկի բլանիքը հետը տարել ա, պետք ա գնաս բերես:

Աղջիկն ասում ա.— Իմ ձեռիս միջին գրած ա, ամեն բան էլ գիտեմ, քեզ մի բան էլ ըլիլ չի, Կերթաս էլ, կգաս էլ: Ես ոնց որ կասեմ, էնենց էլ արա: Կերթաս թագավորից կուզես մեկ ձի, նա քեզ կտա մի զաբուն ղաթիր, ղիմփշ չի անի, որ լավերիցը տա, նրանից կուզես մի ոչխար, էրկու հատ կակալ. Կերթաս ղաթրին կնստես, ոչխարը վեր կունես, կղնես առաջդ. էրկու կակալ կղնես ջերումդ: Գեղը որ դուս ըլիս, ղաթրին շատ կքշես, վեր կհատես, որ տենուս էլ գնում չի, էնտեղ վեր կգաս, էն դունյու դուռը բաց կլինի, էրկու առժու՛ էրկու կողմը կապած կըլի,

1 Առյուծ—Մ. Բ.:

ոչխարը կիսումը կկտրես, կեսը մեկին կտաս, կեսը՝ մեկին, որ ընդով ըլին, դու տուն մտնես:

Կերթաս պուսի կուշտը, բլանիքը կուզես, դառնալիս դուրը փակես ոչ, ընդիան եդ գալու վախտը մի կակալը մնի աղաքը դի, ընդիանք ընդով կըլին, դու անց կկենաս, կգաս:

Տղեն վե կացավ, գնաց թագավորի կուշտը, ասավ.— Ինձ կտաս մի լավ ձի, կտաս մի շաղ ոչխար, մեկ էլ էրկու հատ կակալ:

Թագավորը երես մի զարուն ղաթիր, մի գոթրում ոչխար, էրկու կակալ:

Տղեն ղաթիրը քաշեց գեղիցը դուա, նստեց, ոչխարը էդիր գոզը, կակալը քցեց շեբը, քշեց: Քշեց, քշեց, շատն ու քիչը աստված գիտա, գնաց մի տեղ, ղաթիրը կաղնեց: Էստեղ վեր էկավ, էն դիինի դուրը բաց էլավ, տեհավ, որ էրկու առյուծ, մեկը դուան մի կողմն ա կապած: Ոչխարը կեսումը կտրեց, կեսը մեկին էրես, կեսն էլ՝ մեկին: Ինքը տուն մտավ, տեհավ, որ լավ ծաղիկ-ների մեջ, աղբրի կշտին մի եզը հեց զարուն էր, որ փշի՝ վեր կընկնի:

Շարցրեց թե.— Եզն աղբեր, էգբան խոտի միջին դու խի՞ ես էգբան զարուն:

Եզն ասաց.— Գնացողը տեհել եմ, եդ եկողը տեհել չեմ, գնա՛ արի, իմ դարդը կասեմ:

Վեկացավ գնաց, տեհավ, որ մի շոր տեղը մի եզը կանգնած շատ քոք:

— Եզն ախպե՛ր,— ասավ,— էնքան խոտի միջին էն եզն էնքան զարուն էր, ինչի՞ց ա, որ էս շոր տեղը դու էգբան քոք ես:

Նա էլ ասավ.— Գնա՛ արի, իմ դարդը կասեմ: Գնացողը տեհել եմ, եդ էկողը տեհել չեմ:

Քիչ էլ գնաց, տեհավ, որ մի գոմշի կաշվի վրա մի մարդ, մի կնիկ քնած են, մարդը կնկանն ա ուշունց տալի, թե՛՝ «Դենը քնի, տեղ չկա», կնիկն էլ մարդուն ա բոթում, թե՛՝ «Դենը քնի, տեղ չկա»:

Տղեն հարցրեց, թե.— էդ եքա կաշու վրա խի՞ չի տեղ ըլում:

Մարդն ասում ա.— Գնացողը տեհել եմ, եդ էկողը տեհել չեմ, գնա՛ արի կասեմ:

Ընդիան անցավ գնաց, տեհավ, որ մի կացնի կոթի վրա մի մարդ մի կնիկ քնած են, կողքներին էլ մեկ-մեկ մատ տեղ կա:

էս տղեն ասավ թե.— Գոմշի կաշվի վրա մի մարդ, մի կնիկ տեղավորվում չեն, էս ասում ա՛՝ «Դենը քաշվի», էն ասում ա. «Դենը քաշվի», ինչպե՞ս յոթ տարի դուք էդ կացնի կոթի վրա ըտենց խնոտում եք, որ մեկ-մեկ մատ էլ տեղ կա ղրաղումը:

Մարդն ասում աւ.— Գնա՛ արի, կասեմ: Գնացողը տեհել եմ, եղ էկողը տեհել չեմ: Գնա՛ արի:

Ըտիան գնաց, տեհավ, որ մի կնիկ հացը թխել ա, դուս ա տալի, էն դրադի էրած քերանքները վեր կալնում, ուտում:

— Դեղի ջա՛ն,— ասում ա,— խի՞ չես էս սպիտակ հացիցն ուտում:

Նա ասում ա.— Գնա՛ արի, կասեմ: Գնացողը տեհել եմ, եղ էկողը տեհել չեմ:

Գնաց տեհավ, որ մի մարդ, շրի վրա կարմունջը գծած, ինքը իրեն տրեխները հանեց, որ նի մտնի, ջուրը անցնի:

Նա ասեց, թե.— Ա՛յ տղա, ինձ ըստեղ կարմունջ ա գցած, արի ինձանով անց կացի:

էկավ էդ մարդի մեջքովը անց կացավ էն կուռը, ասաց.— էդ ի՞նչ ա քու դարդը, որ քեզ կարմունջ են գցել:

Ասավ.— Գնա՛, արի, էն վախտը կասեմ: Գնացողը տեհել եմ, եղ էկողը տեհել չեմ:

Գնաց թագավորի տատի դուռը ըսց արավ, տեհավ, որ մի մուկ տեղը, կուպրի կարասի մեջ մի պառավ նստած:

Ասեց.— Դեղի՛, թագավորն ասեց, թե՛ տատս ոսկի բլանիքը տարել ա, դու՞թին մնացել ա փակած, դարկե գա:

Պառավն ասավ.— Քու տատը մեռնի, ոնց որ մեռել ա, էն տարի սով ընկավ, տվինք կորկի, կերանք, ո՛ւր ա բլանիք: Կերթաս իրան ըտհենց կասես:

Դուս գալիս վախտը տղեն մտահան էր արել աղջկա ասածը, դուռը հետ արավ. ո՛ր հետ արավ, մատի եղունգը մնաց յուան արանքումը: Շատ բոթեց, կարաց ոչ դուռը բաց անի, ձեռը քաշեց, դուս չէկավ, հանեց դանակը մատը կտրեց, հանեց ու էկավ կարմնջի կուշտը:

Ըհը՛,— ասավ,— էկա, կարմունջ ախպեր, ասա քու դարդը:

Ասավ.— Արի՛ իմ մեջքովը անց կաց, ես քի կասեմ, փա՛ռք քեզ, աստված, որ գնացողը տեհել էի, եղ էկողը տեհել չէի, հըմի տեհա:

էկավ անց կացավ էն կուռը, մարդն ասավ.— Ծս էն մարդն եմ որ, որտեղ կարմունջ շինեին՝ քանդեի, որտեղ ճամփա շինեին՝ քանդեի, հըմի էն դունիումը ընենց քանդել եմ, էս դունիումը ինձ կարմունջ են գցել, որ վրովս անցնեն:

Տղեն անցավ գնաց պառավի կուշտը, տեհավ, հացը թխած՝ քրինջներն ա ուտում:

Ասավ.— Էկա՛, դեղի՛, հըմի ասա քու դարդը

Ասավ.— Ծս էն կնիկն եմ, որ քյասըբնին, աղքատնին դեին, քերընչնին, էրածնին փայ տեի, հմի օղորդ ա, էն սպիտակ հացը կա, հմա, որից որ դուրս եմ տվել, ընդուց են ինձ տալի:

Տղեն անցավ գնաց էն կացնի կոթի վրա պառկած մարդ ու կնկա կուշտը, ասավ.— Ըհը՛, էկա, ձեր դարդը ասեք:

էն մարդն էլ ասեց.— Փա՛ռք քեզ, աստվա՛ծ, գնացողը տեհել ի, եդ էկողը տեհել չի, էսա տեհա: Մենք էլ մարդ ու կնիկ էինք, որ իրար ուզեցինք, իրար սերներս բռնեց, էն դունիումը ոնց որ սերով ենք էլել, էս դունիումըն էլ սերով ենք:

Տղեն անցավ դնաց կաշվի վրա քնոտածի կուշտը:

Ըհը՛,— ասավ,— ձեր դարդը ասեք, էկա՛:

— Մենք,— ասին,— էն մարդ ու կնիկն ինք, որ իրար ուզեցինք, իրար դիր շեկանք. ոնց որ էն դունիումը անսեր ինք, էնենց էլ ըստի ենք:

Տղեն անցավ գնաց էն շաղ եզան կուշտը:

— Ըհը՛, եզն ախպե՛ր, էկա՛:

— Փա՛ռք քեզ, աստվա՛ծ,— ասավ եզը,— գնացողը տեհել ի, եդ էկողը տեհել չի՝ տեհա: Ծս էն եզն ի, որ դուժանըմը լծեին՝ աչքս գցեի ֆողի ներքի կուռն ու վերի կուռը, թե երբ պտի քասիբի հախկը շատանա, որ աչքը մի բան տենու: Տասը լուծ ըլեր, մենակ ես քաշեի, որ քասիբը աչքը մի բան տենու:

Գնաց էն զարուն եղան կուշտը էս տղան, նրան էլ ասավ, թե.— Ըհը, եզն ախպեր, էկա՛:

Ասավ.— Փա՛ռք քեզ, աստվա՛ծ, գնացողը տեհել ի, եդ էկողը տեհիլ չի, տեհա: Ծս էն եղն եմ, շըկել իրիկուն հարամութին անեի, սամիս կոտրեի, սամոտիքս կտրեի, գութանը խափանեի, բիդունը, որ վեր թողնեին, լուծն էլ տեին պոզերովս, եդնուց էլ ճպտով տեին, ասեին. «Ուսիդ նալլաթ, հնչկել բիկուն խափանեիր գութանը»: Ղորթ ա, ես էս ծաղըկների, լավ սառ աղբրների կշտին եմ, համա դունչս կապած ա, չեմ կարում արածել:

Տղեն գնաց առուծների կուշտը, էրկու կակալ հանեց, մինը մնին էրետ, մինն էլ մնին էրետ, ինքը դուա էլավ, պրծավ: Գնաց իրան դաթըրին նստեց, գնաց դրբա թագավորին:

Թող նա իրեն ճամփովը գնա, մենք գանք թագավորի կուշտը:

Թագավորը տղին ճամփելուց եղնա գնում ա նրա ամարաթը ման գալի: Ման ա գալի աղջկանը գտնում չի, գալիս ա էն խաբար բերող նազըրին ձիու պոշովը տալի՝ սըպանում ա: Ինքը մնում ա փիքը անելիս:

— Վա՛յ իմ ֆոքոսն,— ասում ա,— էն մի իգիթը գենը ղրկեցի,
էն էրկու նազըրին էլ ձիու պոչովը տվի սրպանեցի:

էս փրքրի եգնեն ընկած էր, մեկը գնաց, թե.— Թագավո՛ր, էն
գունիեն ղրկած տղեն գալիս ա:

Թագավորն ասեց թե.— Վա՛յ իմ հոգուն, նրան էն տեղը չեմ
ղըրկել, որ գա:

Ջի հավատաց, իրան ոտով դուրս էլավ դուռը, տեհավ, որ
դրուստ գալիս ա, մոտեցավ ճակատից պաշեց, ասեց.— Փառք
քեղ, աստվա՛ծ, որ եղ էկավ:

Թագավորն ասեց թե.— Ա՛յ տղա, թե կին ունես, թե տղա
ունես, աստված վերևը ըլի շահադ, որ դու ըլիս իմ որդին, ես քեղ
հեր, գնա՛ կնիկ ունես, տղա ունես, աշկարա արա, գնա քի:

Տղեն գնաց իրան տունը, էն աղջիկը էն օթախիցը դուս էկավ.
դուս գալու հետ ասավ.— Քեզ ասի ո՞չ, որ դուռը եդ շանես, հմի
նշանը մեջ կմնա, ի՞նչ անեմ քեզ:

Տղեն ասավ.— Ի՞նչ անեմ, մտիցս ընկավ:

— Լա՛վ,— ասավ,— քեզ բաշխեցի:

Ասավ.— Թագավորը քեզ ի՞նչ ասաց:

Ասավ.— Թագավորն ասավ, թե՛ կնիկ ունե՞ս, թե տղա՞ ունես,
աստված շահադ ըլի, որ դու ըլիս իմ որդին, ես էլ ըլիմ քու հերը:

Աղջիկն ասեց, թե.— Դրուստ ա ասում, հոր ու որդու մեջը
խայինութեն չկա:

Ընդիան գնացին թագավորի կուշտը: Թագավորը տղին
նստացրուց թագավոր, նորից օխտն օր, օխտը քշեր հարսանիք
արավ, փրսակեց:

Աստծանե իրեք խնձոր վեր էկավ, մինն՝ ասողին, մինը՝ յսո-
ղին, մինն էլ՝ ալամ աշխարքին:

